ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 2 օգոստոսի 2006 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյան
Անդամներ՝ Կ. Բալայան
Հ. Նազարյան

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Սարգյուլ Մուշեղի Հակոբյանի 2006 թ. հուլիսի 11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի (գործ 6-4) հիման վրա գործը քննության ընդունելու հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղ. Ս. Մ. Հակոբյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի առաջին մասի, ՀՀ հողային օրենսգրքի 100 հոդվածի առաջին մասի 1-ին կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ից - 6-րդ մասերի պահանջներին, քանի որ դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, առկա է դատարանի վերջնական ակտը, ներկայացվել է դիմողի գնահատմամբ իր նկատմամբ կիրառված օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումները, պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու ժամկետը:

3. Կենսաթոշակառու լինելու եւ միակ եկամտի աղբյուր հանդիսացող վիճելի հողամասից զրկված լինելու հանգամանքներով դիմողի միջնորդությունը՝ պետական տուրքից ազատելու վերաբերյալ, պետք է բավարարել:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի երրորդ մասով, 69 հոդվածի 6-րդ կետով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի «գ» կետով Սահմանադրական դատարանի դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Ս.Մ. Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի առաջին մասի, ՀՀ հողային օրենսգրքի 100 հոդվածի առաջին մասի 1-ին կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, գործն ընդունել քննության:
2. Պետական տուրքի վճարումից ազատելու մասին դիմողի միջնորդությունը բավարարել:
3. Որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովը:
4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ մասի համաձայն դատական կազմի որոշումն ընդունվել է Սահմանադրական դատարանի անունից:

Նախագահող՝

Անդամներ՝

ՍԴԴԿՈ-

2 օգոստոսի 2006 թ.